

## Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՏԱՃԱՐԸ

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ Մայր տաճարը, յոյս կայ, մօտիկ ապագայում հիմնովին կնորոգուի. այդ հանգամանքը մեզ առիթ է տալիս ծանօթացնել հայ հասարակութեանը մեր եկեղեցիներից հնագույնի, ամենաանդրանիկ և ամենագլխաւոր սրբավայրի հետ: Շատ անգամ է պատահում, որ մարդիկ իրենց սրտին մօտիկ, իրենց պաշտած և մեծ յարգանքի արժանացրած առարկան ծանաչում են միայն զգացմունքով, տեսնում են զգացմունքի աչքերով, առանց փորձելու հիմնովին իմանալ այդ առարկայի պատմութիւնը, առանց քննելու նրա ծագումը, դէպի նա տաճած յարգանքների սկզբնապատճառները: Այդ բնական ըմբռնման և մտածման շնորհիւ շատ մեծ և նշանաւոր սրբավայրերի և հնութեան յիշատակարանների մասին պատմութիւններ չեն գրուել, ամենաաննշան երևոյթի վրայ ուշ դարձնող ժամանակագիրները աւելորդ են համարել մի քանի խօսք կորցնել նոցա մասին: Եւ այդպիսի դէպքում պատմադրի դերը կատարել է ժողովրդի վառ երևակայութիւնը, որը զարդարել է իւր պաշտած առարկան զարմանազան գրոյցներով՝ ոտանաւորներով երգել և գովաբանել այդ առարկայի այն բոլոր յատկութիւնները, որ գոյութիւն ունին միմիայն ժողովրդի սրտի, նրա խորը զգացմունքի և հաւատի մէջ: Արդ չափով այդ բանը նկատում ենք ս. Էջմիածնի տաճարի վերաբերմամբ: Ամբողջ դարեր անցել են, Էջմիածնի տաճարը վերանորոգուել է հիմքից, մասնաւոր կամ հիմնական կերպով կարկատուել, այդտեղ դահակալել են մեր կաթողիկոսները, և սակայն սրբան թերի և կցկտուր են մեր ունեցած տեղեկութիւնները այդ տաճարի մասին: Իսկ այսօր, երբ մեր առաջ է դրուած այդչափ խիստ կարեւոր խնդիր, թէ ի՞նչ

եղանակով, ինչ ծրագրով պէտք է վերանորոգել տաճարը, որը իւր ներկայ կարկատուած, ճարձքուած և անհամաչափ շինուածքներով մի անասի կենդանի պատկեր է ներկայացնում հայի դարաւոր գոթախոս պատմութեան, այսօր աւելի է զգայւում շինութեան պատմութեան հետ ծանոթանալու, նրա մասին հաստատ գաղափար կազմելու մեծ կարիքը: Մասնաւոր կարկատան անողները ոչ կարող էին և ոչ էլ կամեցել են հաշուի առնել շատ էական խնդիրներ, որ այժմ, երբ հնարաւորութիւն կայ ոչ թէ կարկատան, այլ արմատական վերանորոգութիւն կատարել, զանց առնել, կամ չենթարկել պատմական խնդիրները մանրամասն, բաղմակոզմանի քննութեան, աններկելի է:

Ամենաէական խնդիրները, որ այժմ խորհրդածութեան հիմք պիտի կազմեն՝ մեր կարծիքով հեռեւեալներն են: Ամենից առաջ, վերանորոգիչները պէտք է աչքի առաջ ունենան, որ Էջմիածնի տաճարը հայերի հնագոյն և ամենագլխաւոր սրբաւայրն է, նա է Մայր եկեղեցեաց հայոց, որի նիւթական պատկերի հետ հնում և այժմ սերտ և անքաքտակ միացած է հայը իւր սրտի ամենափափուկ զգացմունքներով: հայի ս. Սիոնը, հայի հաւատի որբանը այդ սրբաւայրն է: Այդ խորը կազմ արտայայտող բաղմաթիւ օրինակներից յիշենք միայն մէկը: Ժէ դարու պատմագիր Առաքել Դաւրիթեցին պատմում է, որ Նահաբաս պարսից թագաւորի ձեռքով Պարսկաստան գաղթեցրած հայերը ոչ մի զրկանք այնպէս չէին զգում, որքան իրենց սրբաւայրից զրկուիլը, և շահը, որպէս զի նոցա սիրաշահի, յայտնում է հայոց մեծերին. «Վասն ձեր շինեմ աստ (Սպահան քաղաքում) Էջմիածին, զի մի փան այնմ Էջմիածնի կարօտութիւն կրեալ ճմլեցին սիրտք ձեր, և հրամայեմ գնալ բազում ուղտ և ջորի և սայլ, զի վարք և զհող այնր Էջմիածնի բերեալ շինեցի այս Էջմիածինս, որպէս զի առանց իմիջ երկրայութեան հաստատեցին սիրտք ձեր ի վերայ նոր շինեցելոյս» \*։ Սակայն

\* Առաքել Դաւրիթեցի, Վաղարշապատ, 1884, էջ 15:

հայերը խնդրում են շահից տաճարին ձեռք չտալ, այլ հրամայել քարերից մի քանիսը միայն տանել Սպահան, և նոքա իրենց փափաղը միանգամայն առած կլինեն:

Երկրորդ կարևոր խնդիրը հնադիտական և ճարտարապետական հարցն է: Անցեալ դարու կիսից, երբ քառասնական թուականներին Ֆրանսիացի յայտնի հնագէտ Տեքսիէն իւր կառավարութեան հաշուով և յանձնարարութեամբ ճանապարհորդեց Փոքր Ասիայ, Հայաստան, Պարսկաստան և Ասորիք և առ տեղեալն ուսումնասիրեց այդ երկիրներին հնութիւնները, գլխաւորապէս ճարտարապետական յիշատակարանները՝ ճարտարապետական դիտութեան մէջ որոշուած է ընդունել հայկական առանձնայատուկ ճարտարապետութիւն, որի ձիւղաւորութիւնը վրացական ճարտարապետութիւնն է: Այդ ճարտարապետութիւնը, որ ուղղակի ծնունդ է առել բիւզանդականի հետեւորութեամբ, հայկական հողի վրայ, հայ արհեստաւորների ձեռքի տակ ընդունել է առանձնայատուկ ձեւակերպութիւն և դրանով ստացել իւր ուրոյն կերպարանքը: Աենք ցոյց կտանք այդ առանձնայատուկ կողմերը, այժմ այսքանը նկատենք, որ եւրոպական մասնագիտական ընդարձակ գբուածքների մէջ սովորաբար յատուկ գլուխ է նուիրւում հայկական ճարտարապետական ոճի ուսումնասիրութեանը և ի թիւս այլ եկեղեցիների միշտ յիշատակւում է ս. Էջմիածնի վանքը: Այդ շինութիւնը իւր ներկայ դրութեամբ ամբողջական կերտուած չի ներկայացնում, միայն անխախտ և հին են նրա յատակադիժը և պատերի զանգուածը, — մի հանգամանք, որ ճարտարապետութեան մէջ մեծ նշանակութիւն ունի և որի հետ հաշուի պիտի մտնի հիմնական վերանորոգութեան ձեռնարկողը:

Երրորդ կարևոր և ուշադրութեան արժանի խնդիրը այդ շինութեան յարմարեցնելն է ներկայումս գոյութիւն ունեցող և անհրաժեշտ պահանջների հետ: Եկեղեցու շինութիւնն անկասկած մի նպատակ ունի. նա որոշ դաւանանքի պատկանող հաւատացեալ բազմութեան աղօթարանն է: Քանի որ ամեն մի դաւանանք ունի իւր ծէսերն ու ա-

բարոյութիւնները, եկեղեցու շինութիւնները յարմարեցրած են բաւականութիւն տալու ծէսերին և արարողութիւններին, և ինչպէս որ վերջիններիս համար ստեղծուել են հաստատուն և դժուար փոփոխուող կանոններ, շինութիւնն էլ ունեցել է իւր կանոնը: Այդ կանոնի շնորհիւ է, որ օրինակ՝ եօթներորդ դարում շինուած եկեղեցիներէ նմանութեամբ և հետեւողութեամբ են շինուած ներկայի հայոց եկեղեցիները, ոչ միայն ճարտարապետական ընդօրինակութեամբ, այլ նաև շինութեան ներքին դասաւորութեամբ, երբ փոխուել են ծէսերը, նրանց համեմատ փոփոխուել են շինութեան այս կամ այն մասը, բայց ամեն անգամ կանոնից շեղուել են միմիայն ժամանակի անխուսափելի պահանջներին գոհացում տալու համար: Սրինակ, մեր հին եկեղեցիները չունին ժամատներ կամ նախագաւիթներ, որ մըտնում է իններորդ դարուց սկսած, զանգակատները շինուած են տասներկուերորդ դարուց, երբ արեւմտքի հետեւողութեամբ գործածական է դառնում զանգակների հնչիւնով ժամերներին աղօթքի հրաւիրելը, և ինչ իջմիածնի սկզբնական շէքը ունեցել է խաչաձև յատակադիժ, արեւելեան մասում յատակից բարձր բեմով: Քանի որ զանգակատուն շինելու սովորութիւնը մտել էր, հայոց Մայր տաճարը չէր կարող առանց զանգակատան մնալ, որը շինուել է տաճարի արեւմտեան պատին կից տասներկուերորդ դարում: Նրկրորդ անհրաժեշտ յաւելուած շինութիւնը Գէորգ չորրորդ կաթողիկոսի շինած թանգարանն է, եկեղեցու արեւելեան պատին կցած, որի կարեւորութիւնը աւելի աչքի կզարկէր և հասկանալի կլինէր, եթէ նրան տային Մասանց խորան՝ նրա ուղիղ անունը: Նախնական շինութեան մէջ գանուող երկու փոքր խորանները, աւագ սեղանի աջ և ձախ կողմերում, հաւանական է սկզբներում միանգամայն բաւարար էին պարունակելու եկեղեցու սակաւաթիւ մասունքները, զգեստները և սրբազան անօթները, իսկ այժմ ոչ: Ամբողջ տասնուվեց դար գոյութիւն ունեցող սրբավայրը, թէև բազմաթիւ և յաճախակի յափշտակութիւններէ և կողոպտումներէ սարսափելի քիչ բան է կարողացել պահպանել, բայց

այնու ամենայնիւ պահուածներն էլ անկարելի է տեղաւորել երկու փոքր խորանների մէջ: Բացի յիշեալ մասերից, վերջին ժամանակների աւելացածներ են, անկախ աւագ սեղանից, Իջման տեղի և հարաւային ու հիւսիսային պատերի մէջ եղած սեղանները: Այդ բոլորի շնորհիւ եկեղեցու շինութեան նախնական կանոնը եղծուած է, մնացել է նրակախբը: Միայն խօսելով յիշեալ յաւելեալ շինութիւնների մասին, չափաի կարծել, որ նրանք պատահական կամ քմահաճոյական շինութիւններ են: Այլ հարց է, թէ դոցանից իւրաքանչիւրը առանձին առած, ո՞րքան է յարմարեցրած նախնական շինութեան ճարտարապետական ոճին և կարելի՞ է արդեւք հիմնական վերանորոգութեան ժամանակ նրանց անփոփոխ թողնել իրենց տեղերում:

Չորրորդ խնդիրը ամբողջ սկսուածքի կազմակերպման և իրագործման հարցն է: Գործի նիւթական-դրամական հարցը կարելի է առ այժմ որոշ չափով ապահովուած համարել, քանի որ նուիրաբերութիւնը իւր վրայ է առել հայերիս մէջ յայտնի դրամատէր և բարեգործ Աղէքսանդր Մանթաշեանը, մնում է քննել թէ հայերի կամ օտարների մէջ կան արդեւք պատրաստուած և բանիմաց ճարտարապետներ, որ կարողանային վերանորոգութեան ամբողջ պատասխանատուութիւնը իրենց վրայ վերցնել: Եւ սա շատ լուրջ հարց է: Մենք առիթ ենք ունեցել ծանօթանալու եւրոպական մասնագէտների հայկական ճարտարապետութեան նուիրուած ուսումնասիրութեանց հետ, ծանօթ ենք նաեւ թէ մայրաքաղաքի ռուս ճարտարապետները ինչ չափով պատրաստութիւն ունին գործնական կերպով ցոյց տալու իրենց հմտութիւնը հայկական ոճի վերաբերմամբ: Առաջինների՝ այսինքն մասնագէտների մասին, — յիշենք յայտնիներին՝ Տեքսիէ, Շնադէ, Ֆերգուսոն, Կոնդակով, — կարող ենք այս ասել, որ նոքա շնորհիւ իրենց բազմակողմանի հմտութեան՝ ընդհանրապէս ճարտարապետական գիտութեան և ի մասնաւորի բիւզանդական ճարտարապետութեան, շատ ուղիղ կերպով ընդգծել են հայկական ոճի բնորոշ կողմերը, բայց այնքան քիչ նիւթ են ունեցել իրենց ձեռքի տակ, որ նոցա համար դժուար էր

վերջնական եղբայրացութիւններ հանել և մանաւանդ խըն-  
 դիրները մանրամասնօրէն քննել: Ուսումնասիրութեան նիւ-  
 թի պակասութիւնն է եղել պատճառ, սր օտարազգի ճար-  
 տարապետներ մինչև օրս չեն կարողացել նաև բաւարար լու-  
 ծում և գոհացում տալ պատուէր տուողներին: Վերջին  
 տարիներս Կովկասում շինուել են շատ հայկական եկեղեցի-  
 ներ և հները նորոգուել: սակայն որքան մենք առիթ ենք  
 ունեցել տեսնելու այդպիսի շինութիւններ, մեծաւ մա-  
 սամբ ճարտարապետական ոճի կողմից խիստ անյաջող են:  
 Վերջերս Բազում այսպիսի մի փորձ արին, յայտնի  
 է, որ Բաշուի 40,000-ից աւելի հայ բնակիչները ու-  
 նին միայն մի փոքրիկ եկեղեցի և մի մատուռ և վաղուց է  
 մտադրուել են մի մեծ եկեղեցի շինել: Ծխականների խոր-  
 հրդով շինուելիք եկեղեցու յատակագծի համար 1897  
 թուին մրցութիւն նշանակուեց երեք մրցանակով՝ լրա-  
 գիրների մէջ նախօրօք այդ մասին յայտարարելով: Մըր-  
 ցանակներից առաջինը 1200 ռ., երկրորդը 800 ռ., երրորդը  
 300 ռ. էր: Մի տարի յետոյ Բազում ստացուեցին Պետեր-  
 բուրգի ճարտարապետական ժիւրիի կողմից մրցանակի ար-  
 ժանացած երեք յատակագծեր, որոնց տէրերը ստացել էին  
 մրցանակի համար նշանակուած դումարները: Սակայն գոցա-  
 նից ոչ մէկը հայկական եկեղեցի չէր, այլ առաջինը ներկա-  
 յացնում էր վրացական եկեղեցի, երկրորդը ռումանական-  
 հայկական ճարտարապետական ոճերի մի խառնուրդ, իսկ  
 երրորդը ազատ չէր մինչև անգամ ռուսական ոճի ազդե-  
 ցութիւնից: Իմ նախագահութեամբ հրաւիրուած ծխական-  
 ների ժողովը, որին ներկայ էին մի քանի հայ և օտարազգի  
 ճարտարապետներ, մերժեցին երեք յատակագիծը միասին,  
 կորցնելով վճարած 2100 ռուբլին, թէև թեթեւ նախապա-  
 տուութիւն էին տալիս մէկին կամ միւսին: Երեքի փոխարէն  
 աւելի հաւանութիւն գտաւ երկու նորաւարտ հայ ճարտա-  
 րապետների՝ պ. Ռոտինեանի և պ. Տէր Միքայէլեանի նը-  
 կարը, որոնք միայն դրքերից չէին սովորել հայկական ճար-  
 տարապետութիւնը, այլ նաև ճանապարհորդել էին և առ-  
 տեղեաւ ուսումնասիրել հայոց վանքերը, և դրա շնորհիւ

աւելի լաւ էին ըմբռնել և արտայայտել հայկական ոճի առանձնայատկութիւնները: Պետերբուրգի ճարտարապետներէ սկսալը առաջացել էր վերոյիշեալ մասնագէտ-ուսումնականների տուած ոչ այնքան ուղիղ տեսութիւնից: Սրինալ՝ եւրոպացի մասնագէտները այն կարծիքի են, որ հայկական ճարտարապետութեան մէջ նշմարելի է առմանիքականի հետքեր, իսկ ռուս Աոնդակովը ասում է, որ հայկական ճարտարապետական ուրոյն ոճը իսկապէս իւր կատարեալ զարգացումը ստացել է վրացական շինուածքներում, և այդ պատճառաւ այդ ոճը նա անուանում է վրա-հայկական ճարտարապետութիւն, ինչ որ եւրոպացիք հայա-վրական են անուանել:

Ասածներէիցս պարզ է, որ շինութեան յատկագիծ կազմելը շենք կարող օտարազգի ճարտարապետների յանձնելդոնէ այնպիսի մէկը, որ մասնագիտօրէն հիմնովին ուսումնասիրած լինէր Հայկական ճարտարապետութիւնը, յայտնի չէ: Թիֆլիզում ապրող Ծտերն ճարտարապետը վայելում է այդ հուշակը. թէ որքան հիմնական է նրա հուշակը, այդ մենք ցոյց կտանք, երբ առիթ ունենանք խօսելու նրա ձեռքով նկարած Էջմիածնի վերանորոգութեան յատկագիծի մասին: որ այժմ պահւում է վանքի մէջ: Սնում է դիմել հայ ճարտարապետներին, և ահա թէ ինչու մի կողմ թողած, որ հայոց գլխաւոր սրբավայրի նորոգութիւնը կամ վերաշինութիւնը ըստ ամենայնի ցանկալի էր հայերի ձեռքում տեսնել, գործնականապէս էլ միայն նոքա յարմարութիւն ունին այդ գործը գլուխ բերելու: Նոցանից շատերը ապրում են Աովկասում, մեր նշանաւոր և հետաքրքրական ճարտարապետական շինութիւնները գտնւում են Երեւանեան նահանգում և Կարսի վիճակում, բացի Հախպատ, Սանահին և Օնուն վանքերից, որ ընկած են Թիֆլիզ-Երեւանեան երկաթուղու ճանապարհի վրայ: Թիֆլիզում, Բագուում և Երեւանում ապրող հայ ճարտարապետների համար առանձին գիւղարութիւն չի լինիլ, եթէ կամենային իրենց ժամանակի մի մասը նուիրել իրենց հայրենի յիշատակարանների ուսումնասիրութեան և փորձէին այդ ճանապարհով

ձեռք բերած հմտութեամբ իսկապէս օգնել մեր Մայր եկեղեցու վերանորոգութեան: Միևնոյն ժամանակ այս էլ չպիտի մոռանալ, որ դրանով հայ ճարտարապետները զիտութեանն էլ մի ծառայութիւն կ'մատուցանեն, հայ ճարտարապետութեան մասին հրատարակելով աւելի լրիւ և աւելի ուղիղ տեսութիւն: Հայի համար աւելի քան եւրոպացու համար հեշտ է ուսումնասիրութեան գործը նրանով ևս, որ հայը կարող է օգտուել հայերէն պատմական գրուածքներից և հին եկեղեցիների վրայ գտնուող բազմաթիւ արձանագրութիւններից, ինչ որ օտարագրիները չեն կարող, եթէ առանձնապէս չեն պարապել հայերէն լեզուով:

Ի բաց առեալ այս չորս գլխաւոր խնդիրները, որոնց մասին հետեւեալում մենք կաշխատենք առաջ բերել մեր ունեցած տեղեկութիւնները, շատ ցանկալի է մի խնդիր ևս — այն է, որ մեր հտաւարակութեան բանիմաց մասը լրջօրէն հետաքրքրուէր ս. Էջմիածնի տաճարի վերաշինութեան խնդրով, և առանց մանր, անօգուտ վիճարանութիւնների մէջ մտնելու, լաւ մտածուած հայեացքներ և ծրագրներ առաջարկէր, որպէս զի ապագայում գործի ձեռնարկողները գաղափար կաղմէին ազգի ընդհանուր արամագրութեան մասին և ըստ այսմ առաջնորդուէին: Առ այժմ աւելորդ չեմ համարում յիշատակել, թէ ինչ են մտածում ս. Էջմիածնի միաբանները, կամ գոնէ նոցա մեծազոյն մասը: Պ. Յովսէփ Տիգրանեանը անցեալ ամսի 16-ին պ. Մանթաշեանի կողմից եկել էր Էջմիածին, հետն էլ ունենալով ճարտարապետ պ. Աղէքսանդր Ռոտինեանցին, որոնք երկու օր մնացին այստեղ և ճանապարհ ընկան երրորդ օրը: Որքան հնարաւոր էր այդքան կարճ ժամանակում, նոքա զիտեցին տաճարի ներսն ու դուրսը, պատրաստեցին մի քանի լուսանկարներ, նտերնի չափած մակարդակները համեմատեցին և ստուգեցին շինութեան հետ: Ապա պ. Տիգրանեանը խնդրեց վանքի միաբաններին ժողովուել և կարծիքներ ու ցանկութիւններ յայտնել լինելիք վերանորոգութեան մասին:

Ժողովում միաբանները նախ՝ պ. Տիգրանեանին իրենց քրտի գոհունակութիւնը և ուրախութիւնը յայտնեցին, որ

նրա աները, այժմ Մանթաշեանը որոշել է իւր բազմաթիւ բարեգործութիւններից անմասն չթողնել ս. Եջմիածնի տաճարը և մտադիր է նրա վերանորոգութեան հոգսը իւր վերայ առնել: Ապա միաբանութիւնը առարկեց, որ իւր անելիք դիտողութիւններն ու նկատողութիւնները վերջնական չեն և ոչ էլ վճռողական. Ազգիս Վեհափառ Հայրապետին, ընդհանուրից ընտրեալ կաթողիկոսին է վերապահուած տաճարի վերանորոգութեան մասին վերջնական որոշում տալու իրաւունքը. և բացի այդ, չնայած որ միաբանութիւնը միշտ մտածել է վերանորոգած տեսնել ս. տաճարը, յայտնի ծրագիր մշակած չունի: Ժամանակաւորապէս տեղի ունեցած խօսակցութիւնների և կարծիքների փոխանակութիւնից յետոյ, իբրեւ ցանկալի՝ միաբանութիւնը կանգ առաւ հետեւեալ կէտերի վրայ.

Տաճարի մէջ զգալի է խոնաւութիւն, որից շարունակ փնասուել են շինութեան պատերը և զարդանկարները: Այդ բանի առաջն առնուել է ժամանակ առ ժամանակ քարեայ տանիքը առատութեամբ ձէթով լուսավոյ՛ սակայն դա փնասի առաջն առնելու հիմնական միջոց չէ, որովհետեւ բաւական է ամենաթեթեւ զանցառութիւն, և խոնաւութիւնը կշարունակէ իւր աւերը: Ապա, ի նկատի ունենալով, որ խոնաւութիւն է գալիս տանիքի պակաս թեքութիւնից, ի նկատի առնելով, որ տանիքը և վրայի երեք գմբէթները սկզբնական շինութիւնից չեն մնացած, այլ յետոյ են շինուել և նորոգուել, և վերջապէս, որ տանիքի վրայ եղող գլխաւոր և երկրորդական գմբէթները չեն ներկայացնում հայկական ճարտարապետութեան կատարելատիպեր, — միաբանութիւնը գէմ չի լինիլ, եթէ որոշում կայացնուի վերջնել ամբողջ տանիքը, բարակացնել տաճարի չորս չափազանց հաստ սիւները և տանիքին տրուի աւելի մեծ թեքութիւն, իսկ գմբէթներին ճարտարապետական այնպիսի ձեւ, որ շինութեան ժամանակին յարմար լինի: Իսկ ինչ վերաբերում է շինութեան մնացեալ զանգուածին, այսինքն շրջապատի պատերին, ձեռք չտալ զանգուատանը, որ իւր տեսակի մէջ մի գեղեցիկ գործ է. նորոգել զրաի բոլոր պա-

տերը, միատեսակ ճարտարապետութեան վերածելով Գէորգ կաթողիկոսի շինած «թանգարանը», որ իւր ներկայ վիճակում չի համապատասխանում տաճարի ճարտարապետական ոճին: Ինչ վերաբերում է պատերի նորոգութեան, որ պէտք է անձեռնմխելի պահպանել, պ. ճարտարապետի կարծիքով կարելի է անել կրկնակի ձևով. կամ պատերը թողնել այնպէս, ինչպէս որ այժմ կան, և արծաթին մասից շուրջ բոլոր բարակ պատ քաշել ու ծածկել բոլոր թերութիւնները, կամ թէ փոփոխել պատերի փչացած և փխսուած քարերը, հեռացնել կարկատանքների հեռքերը. և այդ, թէև ամուր կը լինի, բայց չի ունենալ առաջին տեսակի նորոգութեան գեղեցկութիւնը: Առաջին եղանակով կատարուած նորոգութիւնը աւելի ծախք կպահանջէ, երկրորդը քիչ: Քանի որ առաջինի գերազանցութիւնը ցոյց տուեց պ. ճարտարապետը, միաբանութիւնը հակուեց առաջինի կողմը, հարկաւ եթէ պ. Մանթաշեանը ծախքերի գէժ առարկելիք չունենայ: Ներսի վերանորոգութեան հարցը մնաց առկախ, որովհետև այդ միանգամայն կախուած կլինի այդ նպատակի համար տրամադրելիք գումարի որքանութիւնից: Միաբանութեան վերջին ցանկութիւնն էր, որ հայ ճարտարապետները սրտով հետաքրքրուէին այս մեծ խնդրով, և որ ամեն մէկը իւր աշխատանքը չխնայէր գործի յաջողութեան և կատարելութեան համար, որպէս զի տասնութեց դար գոյութիւն ունեցող ազգային մեծ հաստատութիւնը ազագույն սերունդներին յանձնուի պայծառ և ըստ ամենայնի բարեշէն վիճակում:

Մեսրոպ Վարդապետ

